ԱՐԹՈՒՐ ՋԱՔԱՐՅԱՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ /ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ/

Հայ-հնդկական առնչությունները դարերի պատմություն ունեն: Հնագիտական տվյալներով հաստատված՝ հայ և՝ օտար աղբյուրների համաձայն, ինչպես հին պատմության ժամանակաշրջանում, այնպես էլ միջնադարում հայկական թագավորությունները, ինչպես նաև Հայաստանից դուրս գտնվող հայ գաղթօջախները բազմաբնույթ կապեր են ունեցել հնդկական ենթամայրցամաքի հետ:

Հայ-հնդկական առնչությունների մասին տեղեկություններ կան դեռևս Քսենոփոնի /մ.թ.ա. 5-4դդ./, Ջենոբ Գլակի /մ.թ. 4դ./, Մովսես Խորենացու /5դ./, Պրոկոպիոս Կեսարացու /6դ./ և այլոց երկերում: Սակայն, Հնդկաստանում առաջին հայ համայնքները կազմավորվել են 16-րդ դարում, երբ բնակիչները հիմնականում վաճառականներ էին, պետական և զինվորական ծառայողներ: 16-րդ դարից սկսած հայ վաճառականներն առևտրական ֆակտորիաների ստեղծման միջոցով հաստատվել են Հնդկաստանում սկիզբ դնելով հնդկահայ հոչակավոր գաղութի պատմությանը: Հայերը բնակվում էին Հնդկաստանի շուրջ 20 քաղաքներում և առևտրակայաններում /Ագրա, Կալկաթա, Չինսուրահ, Սեիդաբադ, Սուրաթ, Բոմբեյ, Մադրաս, Հայդարաբադ և այլն/: Բարգավաճ էին հատկապես Ագրասի, Կալկաթայի, Մադրասի, Բոմբեյի համայնքները: Հնդկահայ համայնքներն կազմակերպչորեն ազգային-եկեղեցական էին և ենթարկվում էին Ամենայն Հայոց կաթողիկոսությանը[1]: Հնդկաստանի հայ համայնքները կազմված էին սոցիալական տարբեր խմբերից՝ վաճառականներ, արհեստավորներ /ոսկերիչներ, դերձակներ, ասեղնագործներ, դարբիններ, զինագործներ/, մանր գործավորներ, կային, իհարկե, նաև մտավորականներ: Հնդկաստանի կյանքում առավել նշանակալից դեր են ունեցել հայ խոշոր վաճառականները, որոնք իրականացնում էին Իրանի, Թուրքիայի, Ռուսաստանի, Վենետիկի հետ կատարվող առևտուրը: Հնդկաստան թափանցած հոլանդական, անգլիական և ֆրանսիական առևտրական կազմակերպությունները սկզբնական շրջանում առավելագույնս օգտվում էին հնդկահայ վաճառականների ծառայություններից: 1686 թվականին Արևելա-հնդկական ընկերության հետ կնքված պայմանագրով հայ վաճառականները անգլիական ազդեցության տակ գտնվող բոլոր երկրներում ստացան ազատ առևտուր անելու, սեփականություն ձեռք բերելու, պաշտոններ վարելու իրավունք[2]: Այդ պայմանագրով միաժամանակ ամրապնդվեց հայ վաճառականների դիրքը, սակայն հետագայում

նրանք աստիճանաբար կորցրին իրենց ինքնուրույնությունը և սկսեցին դուրս մղվել ուժեղ մրցակցի կողմից:

Հնդկահպատակ հայերից շատերն աչքի են ընկել Հնդկաստանի կառավարությանն ու հնդիկ ժողովրդին մատուցած իրենց անուրանալի ծառայություններով՝ մինչև անգլիական գաղութացումը կարևոր դեր խաղալով ինչպես Հնդկաստանի իշխող վերնախավում, այնպես էլ դեպի Արևմուտք հնդկական ապրանքների արտահանման գործում: Հնդկահայերը ընդհանուր շահերով կապված լինելով հնդիկ ժողովրդի հետ, գործուն մասնակցություն են ունեցել նրա ազատագրական պայքարին: 1662 թվականին Մալաբարի հայերը հնդիկների կողքին կռվել են պորտուգալացի նվաճողների դեմ: Հաղթանակից հետո հնդկական իշխանությունները Մալաբարի կառավարիչ են նշանակել հայազգի Մարկոսին: 1760-1764 թվականներին Բենգալիայում անգլիացիների դեմ կռվող հնդկական զորքի հրամանատարն էր Գորգին խանը /Հարությունյան Գրիգոր/: Կռիվներում քաջությամբ աչքի են ընկել հայ սպաներ Մարգար Քալանթարը, Հարություն Մարգարը, Գրիգոր Այվազյանը, Պետրոս Աստվածատուրը, Ղազար Հակոբը և ուրիշներ: Հայերը ակտիվորեն մասնակցել են նաև 19-րդ դարի առաջին կեսին ծագած հակաբրիտանական գրեթե բոլոր ապստամբություններին: Հնդկական տարեգրություններում դրվատանքով են հիշվում Հակոբ Պետրոսյանը, Հովհաննես Սկրտիչը, որոնք գլխավորել են հայ-հնդկական գինված ջոկատները[3]:

18-րդ դարի ընթացքում հնդկահայ գաղթօջախում ազգային ինքնագիտակցությունը զարթոնք է ապրել: Հայոց անկախ պետականության համար մղվող երկարատև պայքարի ճանապարհին առաջին նշանակալի քայլերն են արել Հնդկաստանի Մադրաս քաղաքում հաստատված մի խումբ հայեր: 1772-1783 թվականներին մադրասահայ այս խմբի կողմից դասական հայերենով գրված բազմաթիվ գրքերի հրապարակումը պարզորոշ կերպով արտացոլում է սփյուռքի մտահոգությունը՝ կապված ծուլման և ազգային ինքնությունը կորցնելու վտանգի հետ: 1794 թվականին տպագրվում է հայկական առաջին տպագիր թերթը՝ «Ազդարար»-ը: Գրեթե նույն ժամանակահատվածում ի հայտ է գալիս մեկ ուրիշ աշխատություն՝ «Ոռոգայթ փառաց»-ը, որը նոր իմաստ է հաղորդում հայկական պետականության գաղափարին: Մադրասում հրատարակված Հակոբ Շահամիրյանի այս աշխատությունն ուրվագծում է անկախ հայոց պետականության ապագա Սահմանադրությունը՝ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ դնելով սահմանադրական հանրապետություն հասկացությունը: Տարաբնույթ հասարակական և տնտեսական հանգամանքներով պայմանավորված, Մեծ Բրիտանիայի կողմից Հնդկաստանի գաղութացմանը զուգահեռ, հնդկահայ գաղութն անկում է ապրում 19-րդ դարի ընթացքում:

Հնդկահայերին զբաղեցրել է նաև հայրենիքի՝ Հայաստանի ազատագրության խնդիրը: Հովսեփ էմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը, Հարություն Շմավոնյանը մեծ դեր կատարեցին հայ ժողովրդի ազատագրական գաղափարախոսության ձևավորման գործում: 1772 թվականին Մադրասում լույս տեսավ Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» գիրքը, որը կոչում էր հայ երիտասարդությանը սթափվել և զենքի դիմել Հայաստանն օտար լծից ազատագրելու համար, իսկ 1773 թվականին՝ «Ռոզայթ փառաց»-ը: 1806 թվականին Մադրասի ազգային ժողովը հարց հարուցեց Հայաստանի ազատագրության համար դիմել Ռուսաստանի օգնությանը: Հնդկահայ գործիչները հայ ազատագրական պայքարի հաջողության նախադրյալ էին համարում ազգային մշակույթի զարգացումը: Խոջա Չակիքենցի ծախքով 1771 թվականին էջմիածնում հիմնվեց առաջին տպարանը, Էդվարդ Ռափայելի և Սամվել Մուրատի միջոցներով Եվրոպայում հիմնադրվեցին Մուրատ-Ռաֆաելյան վարժարանը, Խոջա Յոհաննջան Գերաքյանի միջոցներով՝ Նոր Նախիջևանի դպրոցը, իսկ Մասեհ Բաբաջանը իր ունեցվածքից տոկոսներ է կտակել նույն դպրոցին: 18-րդ դարի վերջին և 19-րդ դարում դպրոցներ կային հնդկահայ գրեթե բոլոր համայնքներում: 1821 թվականին բացվել է Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը, 1846 թվականին՝ «Ս. Սանդխտյան» դպրոցը /հիմնադիր Մ. Թադիադյան/ և այլն: Հիմնվեցին տպարաններ Մադրասում և Կալկաթայում, 1794 թվականին Մադրասում լույս տեսավ հայ մամուլի առաջնեկը՝ «Ազդարարը» և այնուհետև շուրջ 10 պարբերականներ /հայերեն և անգլերեն/ Կալկաթայում: Գործում էին մշակութային ընկերություններ՝ «Օճաճասփյուռ ժողովը» /հիմնվել է 1815 թվականին/ Բոմբեյում, «Իմաստախնդրական միաբանությունը» /1821թ./, «Արարատյան ընկերությունը» /1845թ./ Կալկաթայում և այլն: Հնդկաստանի հայ գաղութավայրերի կյանքում խոշոր իրադարձություն էր 1860 թվականին Մ. Նալբանդյանի այցելությունը: 20-րդ դարի սկզբին Հնդկաստանում բնակվում էր շուրջ 2 հազար հայ: Գործում էին «Հայկական մշակութային ընկերությունը» /1920-1968 թվականներին/, «Հայ կանանց բարեգործական ընկերությունը» /1915-1918 թվականներին/ և այլն:

Հայաստանի անկախացմամբ հայրենիք-սփյուռք համագործակցության ընդլայնման և խորացման համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին: Հայ սփյուռքը մեծ դերակատարություն ունեցավ աշխարհի տարբեր երկրների հետ նորանկախ Հայաստանի հարաբերությունների հաստատման և զարգացման, Հայաստանի պետականաշինության գործում: Չնայած իր փոքրաթիվ լինելուն՝ հնդկահայ սփյուռքը իր պատկառելի ավանդն է բերել և ներկայումս էլ բավականին ակտիվորեն աջակցում է Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը և հայ ժողովրդի հիմնախնդիրների լուծմանը: Իր հայրենանպաստ գործունեությունը հնդկահայ համայնքն իրականացրել և

իրականացնում է հիմնականում հետևյալ ուղիներով. մարդասիրական օգնության տրամադրում և մարդասիրական ծրագրերի իրականացում Հայաստանին և Արցախին, գործարար ներդրումներ և գործարար ներգրավվումներ Հայաստանի և Արցախի տնտեսական զարգացման ծրագրերում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ համահայկական միջոցառումների շրջանակներում, հայության հիմնախնդիրների /Արցախյան հիմնահարց, Հայոց Ցեղասպանության ճանաչում/ հայանպաստ լուծման ուղղությամբ քարոզչության իրականացում հնդկական իշխանությունների և հասարակության շրջանում, աջակցություն և գործուն մասնակցություն տարբեր ոլորտներում հայ-հնդկական համագործակցության կայացման և զարգացման գործընթացին:

Թեև հայությունը տարածված է եղել Հնդկաստանի գրեթե բոլոր նշանավոր քաղաքներում և բնակավայրերում, սակայն հնդկահայ գաղութի կյանքում կարևոր դեր է ունեցել Արևմտյան Բենգալիա նահանգը, որտեղ հայերը սկսել են բնակություն հաստատել նույնիսկ անգլիացիներից առաջ՝ 17-րդ դարում: Սկզբնական շրջանում հայերը զբաղվել են մասնավորապես առևտրով՝ օգտագործելով նավահանգիստներն ու ծովային ճանապարհը, զբաղվում էին մետաքսի, կտորեղենի, համեմունքների, աղի, պարատանյութերի, թանկարժեք քարերի և այլ նյութերի առևտրով: Երկրի մի շարք նահանգներում և խոշոր քաղաքներում գոյություն ունեն բազմաթիվ հայկական կոթողներ, եկեղեցիներ: Այժմ Բենգալյան նահանգում կան հինգ հայկական կանգուն եկեղեցիներ, որոնցից երեքը գտնվում են այսօր քիչ թե շատ հայաշուն Կալկաթա քաղաքում: Դրանց մեջ է նաև Կալկաթայի ամենահին քրիստոնեական եկեղեցին՝ 300-ամյա Ս. Նազարեթ եկեղեցին, 190-ամյա Հայոց Մարդասիրական ճեմարանով և փոքրաթիվ հայությամբ: 2004թ. դեկտեմբերի վերջին տարածաշրջանում տեղի ունեցած ցունամին մեծ վնաս հասցրեց Հնդկաստանի որոշ ծովափնյա նահանգներին՝ խլելով ավելի քան 60000 մարդու կյանք և պատճառելով հսկայական վնաս երկրի տնտեսությանը: Կալկաթայի Սուրբ Նազարեթի եկեղեցական խորհուրդի որոշմամբ՝ ցունամիի հետևանքները վերացնելու Հնդկաստանի վարչապետի գրասենյակին կից հատուկ հիմնադրամին փոխանցվեց 215.000 ԱՄՆ դոլարին համարժեք հնդկական ռուփի:

Հնդկաստանի հետ հարաբերություններում խիստ կարևոր է նաև կապը տեղի հայության հետ: Հայերը, որոնց թիվը ամբողջ երկրում հասնում է 250-300-ի, կենտրոնացած են Կալկաթա քաղաքում: Տեղի Մարդասիրական վարժարանը իր գոյության 180 տարիների ընթացքում ընդունել է բազմաթիվ հայ մանուկների ու երիտասարդների աշխարհի տարբեր ծայրերից տալով նրանց միջնակարգ կրթություն: Այժմ աշակերտների թիվն ութսուն է: Այսօր Հնդկաստանի տարածքում, հատկապես Կալկաթայում, բացի եկեղեցիներից և Մարդասիրական ճեմարանից այլ հայապատկան կառույցներ կամ տարածքներ գրեթե չեն պահպանվել, կան առանձին մի քանի շինություններ, գերեզմանատներ,

սպորտային ակումբ և այլն: Եկեղեցիներից շատերն այսօր վերանորոգված են և գտնվում են բարվոք վիճակում: Կան նաև եկեղեցիներ, որոն գտնվելու կամ դրության մասին անրամասն տեղեկություններ չեն պահպանվել: Այսօր Հնդկաստանի տարածքում առավել հայտնի գործող եկեղեցիներն են՝

- Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցին /կառուցված 1707 թվականին/,
- Կալկաթայի Ս. Գրիգոր եկեղեցին եկեղեցին /կառուցված 1906 թվականին/,
- Տիհրայի Ս. Երրորդության եկեղեցին / կառուցված 1867 թվականին/,
- Չինսուրայի Ս. Հովհաննես եկեղեցին /կառուցված 1695 թվականին/,
- Սեյդաբադի Ս.Մարիամ Աստվածածին եկեղեցին /կառուցված 1758 թվականին/,
- Բոմբեյի Ս. Պետրոս եկեղեցին /կառուցված 1796 թվականին/,
- Մադրասի Ս. Աստվածածին եկեղեցին /կառուցված 1712 թվականին/:

Երբեմնի հայաշատ գաղութն այսօր գրեթե հայազրկվել է, տեղաբնակ հայության թիվն այսօր Հնդկաստանում հասնում է 150-ից մինչև 200-ը, որոնցից շատերը մեծահասակներ են, բազմաթիվ են խառն ամուսնությունները, ցավոք, նրանցից շատ քչերն են տիրապետում մայրենի լեզվին[4]: Ի տարբերություն նախկինի, այսօր Հնդկաստանի հայությունը առանձնապես աչքի չի ընկնում իր նշանավոր, հայտնի անձանցով:

Ներկայումս Կալկաթայում, Մադրասում և Հնդկաստանի այլ քաղաքներում կան հայկական անվանումներ կրող փողոցներ: Երկրի մի շարք նահանգներում և խոշոր քաղաքներում գոյություն ունեն բազմաթիվ հայկական կոթողներ, եկեղեցիներ: Պահպանվել են հայկական գերեզմանոցներ /ամենամեծը գտնվում է Կալկաթայում/: 2009 թվականի սեպտեմբերին Նյու Դելիում բացվել է Հայաստանի փողոցը: 2005 թվականին Կալկաթայի Սուրբ Նազարեթի եկեղեցական խորհրդի նախագահի պաշտոնում ընտրվել է Հայկ Սուքիասը կրթսերը: 2008 թվականի վերջերից խորհրդի նախագահի պարտականություններն է կատարում Մայքլ Դութը: Համայնքի և խորհրդի ակտիվ անդամներից կարելի է առաջին հերթին նշել Սյուզան Ռուբենին և Սունիլ Սոբթիին:

Ինչպես արդեն նշվեց, 1821թ Կալկաթայում հայկական Նազարեթի եկեղեցուն կից բացվել է Մարդասիրաց վարժարանը, որն իր գոյության 185 տարիների ընթացքում ընդունել է բազմաթիվ հայ մանուկներ ու երիտասարդներ աշխարհի տարբեր ծայրերից տալով նրանց համապատասխան կրթություն: 1991 թվականի գարնանը Կալկաթայի Մարդասիրաց վարժարանը հանդես է եկել Հայաստանի աղետի գոտուց մի խումբ երեխաներ վարժարանում կրթելու առաջարկով: Արդյունքում Կալկաթա են մեկնել երեխաների խմբեր, սակայն 1995 թվականի հուլիսին բոլոր երեխաները վերադարձել են Հայաստան՝ տեղում ուսումնական գործընթացի ոչ հստակ կազմակերպման պատճառով: Հետագայում Հայ առաքելական եկեղեցու ջանքերով կանոնակարգվել է այդ աշխատանքների կազմակերպումը, որի արդյունքում ՀՀ արտա-

քին գործերի նախարարության աջակցությամբ 1999 թվականի նոյեմբերին Կալկաթայի Մարդասիրաց վարժարանում ուսման են անցել 37 անապահով և որբ երեխաներ Հայաստանի տարբեր վայրերից: Ներկայումս ծեմարանը պետական հավատարմագրում ունեցող անգլիական տիպի երկսեռ միջնակարգ դպրոց է: Դասավանդվող առարկաներն ուսուցանվում են անգլերեն լեզվով, կրթական ծրագիրը համապատասխանում է Հնդկաստանի Հանրապետության պետական կրթական համակարգին (ICSE): Ուսուցանվում են նաև հայերեն առարկաներ՝ հայոց լեզու, հայ գրականություն, հայ ժողովրդի պատմություն, կրոն, երաժշտություն, որոնք համապատասխանում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ընդունված պետական կրթական ծրագրին: Նշված հայալեզու առարկաները դասավանդում են Հայաստանից հրավիրված ուսուցիչներ:

1999 թվականից Կալկաթայի Գերագույն դատարանի որոշմամբ, Հայոց Մարդասիրական ծեմարանի տնօրինությունն ու հովանավորությունը հանձնվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Դպրոցն ունի սեփական շենք և խաղահրապարակ, աշակերտների թիվը հասնում է 80-ի, որոնք եկել են Հայաստանից, Պարսկաստանից և Իրաքից: Մարդասիրական ծեմարանի ղեկավարներն են Հոգեշնորհ Տ. Օշական Վրդ. Գյուլգյուլյան /կառավարիչ/, Արժանապատիվ Տ. Ավետիս Քհն. Համբարձումյան /վարչական տնօրեն/, Տիար Սումիթրա Մալիկ /կրթական տնօրեն/: 2001 թվականի ընթացքում Կալկաթայի վարժարանի տնօրինության ներկայացմամբ և դեսպանության օժանդակությամբ Հնդկական դպրոցների սերտիֆիկացման քննական խորհրդի կողմից հայերենը պաշտոնապես ճանաչվել է որպես քննական առարկա:

Հնդկիայ համայնքը նյութական աջակցություն է ցուցաբերել 1988 թվականի Սպիտակի երկրաշարժից տուժածներին: ՀՀ դեսպանության շենքը Նյու Դելիում, որը պաշտոնապես բացել է ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանը 2003 թվականին՝ Հնդկաստան կատարած պետական այցի շրջանակներում, կառուցվել է համայնքի միջոցներով: Համայնքը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում նաև դեսպանության կողմից կազմակերպվող տարբեր միջոցառումներին:

2007 թվականի փետրվարին կայացել է Ամենայն Հայոց Կաթողիկոս ՆՍՈՏ Գարեգին Բ-ի հովվապետական այցը Հնդկաստան: Վեհափառը պատարագներ է մատուցել Կալկաթայի, Մումբայի, Չինսուրայի եկեղեցիներում, հանդիպումներ ունեցել Հնդկաստանի նախագահ Աբդուլ Քալամի, Արևմտյան Բենգալ նահանգի գլխավոր նախարար Բ. Բատաչարիայի, Կալկաթայի հայ համայնքի, Կալկաթայի Մարդասիրական վարժարանի սաների հետ, այցելել է Նյու Դելիում ՀՀ դեսպանություն[5]:

2008 թվականի նոյեմբերին Քերալա նահանգի Մալանկարա քոյր եկեղեցու հովվապետի հրամանով Ամենայն Հայոց Կաթողիկոս ՆՍՈՏ

գարեգին Բ-ն կրկին այցելել է Հնդկաստան: Վեհափառ հայրապետը Քեբալա նահանգում եղել է հոգևոր և բժշկական կենտրոններում, արժանացել Մալանկարա եկեղեցու բարձրագույն պարգևի՝ սուրբ Թոմասի շքանշանին: Չեննայում /Մադրաս/ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերաօծել է Մադրասի Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցին /1712 թվականին/, Կալկաթայում մասնակցել է Ս. Նազարեթ հայկական եկեղեցու 300-ամյակին նվիրված միջոցառումներին, այցելել Չինսուրա, Սահիդաբադ, Տանգրա, մատուցել սուրբ պատարագ Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցում: Նոյեմբերի 17-ին վեհափառ Հայրապետն այցելել է Հնդկաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանատուն, որտեղ կազմակերպվել է հանդիպում Նյու Դելիում հավատարմագրված դեսպանների, ՀՀ դեսպանատան աշխատակիցների և փոքրաթիվ հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

2005 թվականի նոյեմբերի 28-ին Մումբայում տեղի ունեցավ Հայաստանի պատվավոր հյուպատոսի գրասենյակի պաշտոնական բացումը: Մումբայում Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս է Ռոզիբլյո առևտրաարդյունաբերական ընկերության ղեկավարներից Հարշադ Մեհտան: Մումբայը հանդիսանում է Հնդկաստանի գործարարության և ֆինանսական հիմնական կենտրոն և այստեղ ներկայացված լինելու հանգամանքը գործարար բնագավառում ավելի սերտ համագործակցություն հաստատելու գրավականն է: Պատվավոր հյուպատոսի գրասենյակի առկայությունը Հնդկաստանի այդ խոշոր արդյունաբերական կենտրոնում արդարացված է և նպաստում է հայ-հնդկական հարաբերությունների զարգացմանն ու ընդլայնմանը առևտրատնտեսական և մշակութային ոլորտներում: Հյուպատոսության կողմից տարվում է ծավալուն աշխատանք հնդիկ գործարարների շրջանում ՀՀ-ն ներկայացնելու ուղղությամբ: 2006 թվականի մարտի 18-ից 21-ին Երևանում կայացավ հայ-հնդկական գործարար համաժողով, որին մասնակցեց Մումբայում ՀՀ պատվավոր հյուպատոս Հարշադ Մեհտայի գլխավորությամբ հնդիկ գործարարների մեծ պատվիրակություն: 2008 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին պատվավոր հյուպատոսի աջակցությամբ Մումբայում անցկացվել են Հայաստանի օրեր՝ ընդհանուր միջոցառումների շրջանակում:

---

[1] Տես Հայկական սովետական հանրագիտարան, Հատոր 6, Երևան, 1980, էջ 489-490:
[2] Տես Страны мира сегодня. Том 4 - Азия. Справочник. М.: ИТАР-ТАСС, 2004, էջ 47:
[3] Տես Ջ. Կիրակոսյան, Հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական էջը. Երևան, 1957, էջ 29-30:
[4] Տես Armenia-India, Embassy of India in Yerevan, September 2007, էջ 21:
[5] Տես Նամաստե Հնդկաստան, Երևան, Հնդկաստանի դեսպանություն, 2008 թիվ 2 /ապրիլ-սեպտեմբեր/, էջ 5, 11-13: